

ԱՄ ՓԱՐԹՆԸՐԶ ԲՈՆՍԱԿԻՆԳ ԲԱՄՓՆԻ
2011, մայիս

«Գնիշիկ», «Խուստուփ» եւ «Չանգեգուր» արգելավայրերի շահառուների վերլուծություն. Երեւան



Բնության համաշխարհային
հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղ



ԱՄ Փարթնըրզ
Բոնսակինգ Բամփնի

Բովանդակություն

1	ՆԱԽԱԲԱՆ	4
1.1	ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	4
1.1.1	Տեղեկություններ ծրագրի մասին	4
1.1.2	Տեխնիկական առաջադրանք	5
1.2	ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	6
1.2.1	Շահառուների բացահայտում եւ նրանց կարիքների սահմանում	6
1.2.1.1	Շահառուների նկարագիրը	6
1.2.1.2	Ծրագրում ներգրավելու հիմքերը	7
1.2.2	Տեղեկատվության հավաքագրում եւ գրառում	7
2	ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	8
2.1	ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	8
2.1.1	Արգելավայրերի մասին շահառուների իրազեկվածությունը	8
2.1.2	Արգելավայրերի վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտությունը	9
2.1.3	Տեղեկատվության եւ հաղորդակցման ցանկալի ձեւերը	10
2.2	ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ	11
2.2.1	Շահառուների վերաբերմունքը արգելավայրերի ստեղծմանը եւ ընդլայնմանը	11
2.2.2	Շահառուների վերաբերմունքը համայնքների վարչական տարածքներում արգելավայր ստեղծելու նախաձեռնությանը	12
2.2.3	Արգելավայրի հիմնական նշանակությունը համայնքների համար	13
2.3	ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԻՎԱՑԻԱԸ	14
2.3.1	Պետական կառույցներ	14
2.3.2	Միջազգային դոնոր կազմակերպություններ/ծրագրեր	15
2.3.3	Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ	15
3	ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ	17
3.1	ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ	17
3.1.1	Պետական կառույցներ	17
3.1.2	Միջազգային դոնոր կազմակերպություններ/ծրագրեր	17
3.1.3	Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ	18
3.2	ՀՆԱՐԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ	18
3.2.1	Համայնքի շահերի տեսանկյունից	18
3.2.1.1	Պետական կառույցներ	18
3.2.1.2	Միջազգային դոնոր կազմակերպություններ/ծրագրեր	18
3.2.1.3	Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ	19
3.2.2	Ծրագրի իրականացման առումով	19
3.2.2.1	Պետական կառույցներ	19
3.2.2.2	Միջազգային դոնոր կազմակերպություններ/ծրագրեր	19
3.2.2.3	Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ	20
3.2.3	Ո՛վ պետք է իրականացնի վերահսկողությունն ու կառավարումը	20

4	ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	22
4.1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	22
4.2	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24
5	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	25
5.1	ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հարցման մասնակից շահառուների ցանկ	25
5.2	ՀԱՎԵԼՎԱԾ 2. Շահառուների կարիքների գնահատման հարցաթերթ	27

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ՄՆ	Մշակույթի նախարարություն
ԲՀՀ	Բնության համաշխարհային հիմնադրամ
ՀԲ	Համաշխարհային բանկ
GTZ	Գերմանիայի Տեխնիկական Համագործակցություն
KfW	Գերմանիայի Դաշնային Հանրապետության վերակառուցման եւ զարգացման բանկ (Kreditanstalt für Wiederaufbau)
CEPF	Կրիտիկական վիճակում գտնվող Էկոհամակարգերի զարգացման հիմնադրամ
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն
NABU	Բնության եւ կենսաբազմազանության պահպանության միություն
ACDI/VOCA	Agricultural Cooperative Development International and Volunteers in Overseas Cooperative Assistance (Գյուղատնտեսական կոոպերատիվների միջազգային զարգացում եւ կոոպերատիվների օտարերկրյա աջակցություն)
ARSPIU	Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի իրականացման գործակալություն
CARMAC	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության ծրագիր
ՄԱԶԾ	Միացյալ ազգերի զարգացման ծրագիր
ԳԷՀ	Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամ
ԲՊՏ	Բնապահպանական պետական տեսչություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԻԱՄ	Իրավաբանական անձանց միություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԲՀԿ	Բարեգործական հասարակական կազմակերպություն
ԶՀԻ	Զաղաքացիական հասարակության ինստիտուտ
ՈԻԿԿ	Ունիվերսալ վարկային կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր ու միջին ձեռնարկություն
ԲՀ	Բարեգործական հիմնադրամ
ԿԹՏ	Կարեւորագույն թռչնաբանական տարածք

1 ՆԱԽԱԲԱՆ

1.1 ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Շահառուների վերլուծությունը ապահովում է արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման, ինչպես նաեւ բնական ռեսուրսների կառավարման գործիքների զարգացման տեղեկատվական հիմքերը: Սույն հետազոտության նպատակն է օժանդակել արգելավայրի կառավարման մոդելի ստեղծման գործընթացներին՝ առավելագույն արդյունավետություն ապահովելով ինչպես բնապահպանության, այնպես նաեւ՝ համայնքային ներգրավվածության առումներով:

Շահառուների մասով վերլուծությունը կազմում է ընդհանուր հետազոտական աշխատանքի մի մասը, որն ունի եւս երկու բաղադրիչ.

- համայնքների հիմնարար սոցիալ-տնտեսական հետազոտություն,
- տուրիզմի զարգացման հնարավորությունների ուսումնասիրություն:

1.1.1 Տեղեկություններ ծրագրի մասին

Հայաստանի արդյունաբերության եւ գյուղատնտեսության զարգացումը, բնական տարածքների մեծամասշտաբ յուրացումը, ինչպես նաեւ կլիմայի փոփոխությունը բերել են Էկոհամակարգերի ամբողջականության եւ հավասարակշռության խախտման: Պատճառահետեւանքային ազդեցությունները ընդհանուր առմամբ ներառում են՝ խոցելի բնակմիջավայրերի դեգրադացումը, բուսական եւ կենդանական աշխարհի տեսակային կազմի նվազեցումը եւ Էկոհամակարգային համալիր մոտեցումների թերի կիրառումը: Այսպիսով, նվազում են համայնքների սոցիալ-տնտեսական բարեկեցությունն ապահովող հիմնական աղբյուրներից (բնական պաշարներից) օգտվելու հնարավորությունները:

«Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի նպատակը Հայաստանի և գլոբալ բնապահպանական նշանակության կենսաբազմազանության պահպանությունն է: Ծրագրի խնդիրն է նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ներկայիս ԲՀՊՏ-ների համակարգում Էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածությունն ապահովելու եւ կենսաբազմազանության պահպանության գործում շահառուների ակտիվ մասնակցությունը առավել խթանելու նպատակով:

Երկու հիմնական շեշտադրումներն են՝ բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) համակարգի ռացիոնալացումը եւ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը: Ծրագրի իրականացման արդյունքում երկրի ԲՀՊՏ համակարգն առավել լիարժեք կերպով կընդգրկի ներկայումս թույլ ներկայացված Էկոհամակարգերը եւ կենսաբազմազանությունը: Ներդրումները կուղղվեն համայնքներ՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ բնական պաշարների ռացիոնալ օգտագործման համար, ինչպես նաեւ բարելավելով գյուղական ենթակառուցվածքները եւ միեւնույն ժամանակ նպաստելով աղքատության ծավալների կրճատմանը: Հայաստանի ԲՀՊՏ համակարգում չընդգրկված որոշ Էկոհամակարգերը խիստ կարելու են միջազգային նշանակության մի շարք տեսակների, այդ թվում Էնդեմ ագրոկենսաբազմազանության պահպանության համար:

Ծրագիրը կազմում է ՄԱԶԾ/ԳԷՀ «Հայաստանի պահպանվող տարածքների զարգացում» միջին ծավալի ծրագրի բաղկացուցիչ մասը:

1.1.2 Տեխնիկական առաջադրանք

Առաջադրանքը ներառել է հետեւյալ հիմնական խնդիրները.

- ներկայացնել շահագրգիռ կողմերի շահերը եւ հետեւողական լինել, որ համայնքների ներգրավվածությունը ծրագրում լինի մասնակցային,
- ծրագրով նախանշված խնդիրների համատեքստում ուսումնասիրել եւ գնահատել շահագրգիռ անհատների, խմբերի եւ կառույցների կարիքները եւ ակնկալիքները,
- որոշել տարբեր շահառուների մասնակցության ձեւերը ծրագրի իրականացման տարբեր փուլերում,
- մշակել առաջարկություններ հնարավոր համագործակցության ուղղությամբ:

Շահագրգիռ կողմերի մասով վերլուծությունը¹ ներառում է հետեւյալ հանձնարարականները.

- **Յ.1:** Ուսումնասիրել օժանդակ/երկրորդական փաստաթղթերը, ներառյալ՝ ընթացիկ կամ նախատեսվող տարածաշրջանային կամ տեղական զարգացման ծրագրերը,
- **Յ.2:** Նախագծել շահագրգիռ կողմերի վերլուծության մեթոդոլոգիա եւ հարցաշարեր,
- **Յ.3:** Իրականացնել շահագրգիռ կողմերի վերլուծություն, որը՝
 - մասնակցային է եւ իրագործելի,
 - ներկայացնում է տարբեր շահագրգիռ կողմերի՝ դասակարգելով նրանց ըստ կարելիության եւ ազդեցության աստիճանի,
 - ներկայացնում է շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը, դիրքորոշումն ու տեսակետները,
 - սահմանում է ծրագրի իրականացման հնարավոր խթաններն ու բացահայտում խոչընդոտները,
 - վերլուծում է շահագրգիռ կողմերի հիմնական մտահոգությունները եւ ակնկալիքները:
- **Յ.4:** Վարել հարցազրույցներ պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների (Ճակատեն, Ծավ, Շիկահող, Լեռնաձոր, Վարդանիձոր, Գեղանուշ, Ներքին Յանդ, Սրաշեն (Սյունիք) եւ Ազարակաձոր, Գնիշիկ, Խաչիկ եւ Արենի (Վայոց Ձոր), քաղաքացիական հասարակության ինստիտուտների² ներկայացուցիչների եւ համապատասխան այլ շահառուների հետ: Մասնավորապես՝
 - Սյունիքի եւ Վայոց ձորի մարզպետարանների ներկայացուցիչների,
 - համայնքապետեր եւ թիրախային համայնքային խորհուրդների անդամների,
 - ՀՀ գյուղատնտեսության նախարարության (ԳՆ) «Հայանտառ» պետական ոչ առեւտրային կազմակերպության (ՊՈԱԿ) ներկայացուցիչների,
 - «Արփի» բնապատմական արգելոց
 - ՀՀ բնապահպանության նախարարության (ԲՆ) Բնապահպանական պետական տեսչության (ԲՊՏ) գրասենյակների,
 - ոլորտում շահագրգռված եւ ակտիվ ներգրավվածություն ունեցող հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների),
 - քիզնեսի զարգացման աջակցության գործակալությունների,
 - միությունների, ասոցիացիաների եւ կոոպերատիվների,
 - մասնավոր ձեռնարկությունների՝ գինեգործության, լեռնահանքային արդյունաբերության, Էներգիայի արտադրության, գյուղատնտեսության, եւ այլ ոլորտներում,
 - պոտենցիալ ներդրողների («Ագրոքիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամ, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ եւ այլն):

¹ Վերլուծության տվյալները կօգտագործվեն նախատեսվող «Գնիշիկ» եւ «Խուստուփ», ինչպես նաեւ գործող «Չանգեզուր» արգելավայրի կառավարման պլանը մշակելու եւ/կամ լրամշակելու նպատակով

² Քաղաքացիական հասարակության ինստիտուտները զեկույցում պայմանականորեն կընդհանրացվեն որպես հասարակական կազմակերպություններ: Այս ոլորտի հաստատություններն են նաեւ ասոցիացիաները, միջազգային կառույցների տեղական ներկայացուցչությունները, միությունները, կոոպերատիվները եւ այլն:

- **3.5:** ԲՀՀ հայաստանյան գրասենյակին տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.
 - հիմնական շահագրգիռ կողմերը եւ նրանց խնդիրները / նպատակները,
 - կարելու է նախաձեռնել եւ անհատները,
 - ծրագիրն իրականացնող կառույցների եւ ՀՀ կառավարության հնարավոր ներգրավվածությունը շահագրգիռ կողմերի խնդիրներին ու նպատակներին արձագանքելու հարցում:

1.2 ՄԵԹՈՂՎԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.2.1 Շահառուների բազահայտում եւ նրանց կարիքների սահմանում

1.2.1.1 *Շահառուների նկարագիրը*

Շահառուների վերլուծությունը հաշվի է առնում ծրագրի տարբեր շահագրգիռ կողմերի կարիքները: Այն հնարավորություն է տալիս պատկերացնել օգուտների եւ վնասների հարաբերակցությունը, շահերի բախումները եւ մշակել այդ խնդիրների լուծման մեթոդներ: Բնապահպանական ծրագրերի իրականացման համատեքստում հիմնական շահառուներ են հանդիսանում նախատեսվող կամ գործող արգելավայրերի հարակից համայնքները:

«Գնիշիկ» արգելավայրի ստեղծման ծրագրի շրջանակներում հարցումներ են անցկացվել նախատեսվող արգելավայրի տարածքների եւ դրանց սահմանների մասին տարբեր շահառուների կարծիքը պարզելու, ինչպես նաեւ արգելավայրի կառավարման մոդելների եւ ընդհանուր առմամբ արգելավայրի ստեղծման վերաբերյալ շահառուների մոտեցումները գնահատելու համար: Ուսումնասիրության շրջանակներում կազմակերպվել են հարցումներ Երեւանում, ինչպես նաեւ ՀՀ երկու հարավային մարզերում՝ Վայոց Ձորում եւ Սյունիքում:

Շահառուների նախնական ցանկը կազմվել է տարբեր փաստաթղթերի³, ուղեցույցների եւ համապատասխան վեբ կայքերի դիտարկման եւ ընդհանուր իրազեկվածության արդյունքում: Շահառուների որոշման հարցում տեղեկատվական օժանդակություն են տրամադրել Ազրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոնը, ինչպես նաեւ Օրիուս կենտրոնը: Վերլուծության ընթացքում շահառուների ցանկը փոխվել է եւ համալրվել՝ հիմնվելով նաեւ այն սկզբունքի վրա, թե ում են ցանկում ընդգրկված կազմակերպությունները տեսնում որպես ծրագրի շահառուներ:

Այնուհետեւ շահառուները դասվել են մի քանի խմբերի: Մարզերում խմբերն են՝ տեղական եւ մարզային իշխանությունները, պետական կառույցները, քաղաքացիական հասարակության ինստիտուտները (այլապես՝ ՀԿ-ները), մասնավոր հատվածը (լեռնահանքային ձեռնարկություններ, ֆերմերային տնտեսություններ, գինեգործներ, մեղվապահներ եւ այլն):

Երեւանում խմբերն են՝ պետական կառույցները, միջազգային կազմակերպությունները, քաղաքացիական հասարակության խմբերը կամ ՀԿ-ները, ծրագրերը (օրինակ՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում եւ մրցունակություն» ծրագիրը): Շահառուների նախնական ցանկը, ինչպես նաեւ հարցաշարերը հաստատվել են ԲՀՀ հայաստանյան մասնաճյուղի համապատասխան մասնագետների կողմից:

³ Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի կառավարման պլանի նախագիծ, «Շիկահող» պետարգելոցի կառավարման պլանի նախագիծ:

1.2.1.2 Ծրագրում ներգրավելու հիմքերը

Շահառուների ընտրությունը հիմնված է եղել համապատասխանության չափորոշիչների վրա: Մի կողմից, ընտրվել են կառույցներ կամ անհատներ, որոնց լիազորությունները, շահերը եւ/կամ միջոցները կարող են այս կամ այն կերպ ազդել ծրագրի ընթացքի վրա: Մյուս կողմից, հաշվի են առնվել այն խմբերը, ում գործունեության զարգացման վրա ծրագիրը կարող է զգալի դրական կամ բացասական ներգործություն ունենալ:

Ընդհանուր առմամբ, շահառուների նախնական ցանկում ներգրավվել են 80 հարցվողներ: Մշակվել է տվյալների բազա, որտեղ ներկայացվել են շահագրգիռ կառույցի ներկայացուցիչների տվյալները: Հարցվողների թիվը կազմել է 74, որից 25-ը՝ Վայոց Ձորում (տես Հավելված 1), 30-ը՝ Սյունիքում եւ 19-ը՝ Երեւանում: 9-ը հարցում իրականացվել է էլեկտրոնային տարբերակով: Շահառուների սպասելիքները, կարիքները, ծրագրի նկատմամբ նրանց դիրքորոշումը ամփոփ ներկայացված են առանձին աղյուսակով (տես Հավելված 2):

1.2.2 Տեղեկատվության հավաքագրում եւ գրառում

Առաջին հերթին ուսումնասիրվել են տարբեր նմանատիպ հետազոտություններ, աշխատանքային փաստաթղթեր եւ այլն: Երկրորդական փաստաթղթերի ուսումնասիրությունն արվել է թիրախային մարզերում ընթացիկ կամ նախատեսվող ծրագրերի նպատակներն ու արդյունքները պարզելու եւ համագործակցության հնարավոր ուղիներ փնտրելու համար:

Հարցաշարի (տես Հավելված 2) կազմման աշխատանքներին մասնակցել են ԲՀՊՏ եւ սոցիալ-տնտեսական հետազոտությունների ոլորտում փորձառություն ունեցող մասնագետներ: Հարցաշարում տեղ են գտել բաց եւ փակ հարցեր, որոնց պատասխանները ստացվել են շահառուների հետ հանդիպումների եւ հարցազրույցների, հեռախոսային հարցազրույցների կամ էլեկտրոնային հարցումների ընթացքում:

Վայոց Ձորում հարցմանը մասնակցել են 4 համայնքներ, իսկ Սյունիքում՝ 10 (ներառյալ Կապան եւ Քաջարան քաղաքները): Հավաքագրված տեղեկատվությունը գրառվել է, թվայնացվել եւ համապատասխանաբար վերլուծվել:

2 ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԻՐԱՉԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

2.1.1 Արգելավայրերի մասին շահառուների հրազեկվածությունը

Մայրաքաղաքում գործող հաստատությունների ներկայացուցիչները մեծամասամբ տեղեկացված են ծրագրի իրականացման մասին: Ծրագրի մասին ավելի քիչ են տեղեկացված, սակայն, միջազգային դոկոր կազմակերպությունները:

Այսպես, *քաղաքացիական հասարակության ինստիտուտների (ԹՀԻ)* եւ/կամ հասարակական կազմակերպությունների (ՀԿ) խմբում հարցվողների մի մասը հանգամանորեն անդրադառնում է ծրագրի նկարագրին եւ նպատակներին: Արգելավայրն ընդլայնվում է «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է՝ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ընդլայնման եւ զարգացման միջոցով ապահովել տվյալ տարածքներում կենդանական եւ բուսական աշխարհի հազվագյուտ եւ էնդեմիկ տեսակների, բնության հուշարձանների պահպանությունը: Ի լրումն նշվածի՝ ծրագիրը նպատակ ունի նաեւ կատարելագործելու հատուկ պահպանվող տարածքների կառավարման համակարգը Հայաստանում եւ նպաստելու կառավարումն իրականացնող ՊՈԱԿ-ների ֆինանսական կայունությանը:

Հարցվողների շրջանում հղում է արվել նաեւ բնապահպանական օրենսդրությանը՝ մատնանշելով ՀՀ կառավարությանը՝ որպես ծրագրի նախաձեռնող կողմ: Այսպես, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքները ստեղծում եւ դրանց կատեգորիաները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

«Հայկական բարձրավանդակի կենսաբազմազանության պահպանման հիմնադրամ» ՀԿ ներկայացուցիչները նշում են, որ լինելով ԲՀՀ հիմնական գործընկեր՝ տեղյակ են ընթացիկ ծրագրերի մասին: Հիմնադրամը արդեն իսկ մասնակցել է նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հարակից համայնքների զարգացման ծրագրերի իրականացման գործընթացներին «Կենսաբազմազանության պահպանություն եւ համայնքների զարգացում. Հարավային Հայաստանում Էկոտարածաշրջանի բնապահպանական պլանի նպատակների իրականացում» ծրագրի շրջանակներում:

Միեւնույն ժամանակ, նախատեսվող արգելավայրերի տարածքների կամ սահմանների մասին հարցվողների իրազեկությունը բավական ցածր է: Այնուամենայնիվ, ինֆորմացված շահառուները նշում են, որ նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրը պետք է ստեղծվի «Արփի» արգելոցի հիման վրա՝ ընդգրկելով Նորավանքի կիրճը: «Չանգեգուր» արգելավայրը ներառում է Գեղվա ձորը, իսկ նախատեսվող «Խուստուփ» ԲՀՊՏ-ն՝ Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լանջը:

«Հայաստանի թռչունների պահպանման միություն» ՀԿ ներկայացուցիչը ծանոթ է նախատեսվող «Խուստուփ» արգելավայրի տարածքին, որը ուլարի բնադրավայրն է: ՀԿ-ի կողմից նախանշված կարելորագույն թռչնաբանական տարածքները (ԿԹՏ) մասամբ համընկնում են «Չանգեգուր» արգելավայրի եւ «Շիկահող» պետարգելոցի տարածքների հետ:

Համաձայն ՀԿ ոլորտի հարցվողների՝ «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի նպատակներն են՝ ՀՀ ԲՀՊՏ զարգացումը, ինչպես նաեւ բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունը:

Ծրագրի ֆինանսավորումը, ըստ ՀԿ խմբի հարցվողների, ՄԱՉԾ-ԳԷՀ, ԲՀՀ եւ CEPF միջազգային զարգացման գործակալություններն են:

Ինչ վերաբերում է *միջազգային դոնոր կազմակերպություններին*, ԲՀՀ հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչը նշում է, որ արգելավայրերը ստեղծվում կամ ընդլայնվում են ՄԱՉԾ-ԳԷՀ «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի շրջանակներում, որը սկսվել է 2010թ-ին: Հարցվողը առավել տեղեկացված է ծրագրի «Գնիշիկ» եւ «Չանգեզուր» բաղադրիչների մասին, քանի որ «Կենսաբազմազանության պահպանություն եւ համայնքների զարգացում» ծրագիրը եւս առնչվում է նշված արգելավայրերին: Նախատեսվող «Գնիշիկ»-ը տարածվում է մինչեւ Եղեգնաձորի հողատարածքների հյուսիս-արեւելք՝ ներառելով Ագարակաձոր, Արենի եւ այլ համայնքները, իսկ «Խուստուփ»-ը գտնվում է «Շիկահող» պետարգելոցի, «Չանգեզուր» արգելավայրի եւ «Արեւիկ» ազգային պարկի միջեւ: Համայնքներն են՝ Շիկահող, Լեռնաձոր, Ծավ, Ճակատեն եւ այլն: «Չանգեզուր»-ը գտնվում է Քաջարան քաղաքից դեպի հյուսիս-արեւմուտք: Գտնվում է Բարգուշատի եւ Չանգեզուրի խաչման տեղամասում:

Բնության եւ կենսաբազմազանության պահպանության միությունը (NABU) փաստում է, որ տվյալ տարածքների կենսաբազմազանության ուսումնասիրության աշխատանքներում մասնակցություն ունենալու շնորհիվ բավական տեղակացված է ծրագրի մասին:

Ծրագրի նպատակն է կարողությունների զարգացումը, պետական ներդրումների ապահովումը, ինչպես նաեւ համայնքների ներգրավումը արգելավայրերի կառավարման գործընթացներում:

Պետական կառույցների ներկայացուցիչները ծանոթացել են արգելավայրերի ստեղծման/ընդլայնման ծրագրի ընդհանուր նախաձեռնությանը ՄԱՉԾ գրասենյակում կազմակերպված սեմինարների ընթացքում, սակայն, տարածքի ընդլայնման չափի, կառավարման մոդելի ընտրության մասով ինֆորմացիային չեն տիրապետում: Հարցվողները նշում են, որ ԲՀՊՏ ռազմավարությունների գործողությունների շրջանակներում հաստատված է եղել «Գնիշիկ» ազգային պարկի ստեղծումը, եւ որ մի քանի ծրագրեր իրականացվել են Գնիշիկում: Պետական կառույցների ներկայացուցիչները մեծ կարեւորություն են վերագրում ծրագրին եւ նշում, որ Գնիշիկի տարածքում անհրաժեշտ է կիրառել պահպանման ավելի խիստ ռեժիմ:

2.1.2 Արգելավայրերի վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտությունը

Երեւանում իրականացված հարցումները ցույց են տալիս, որ շահառուները ամենից ավելի կարեւորում են *քարտեզները* եւ *հողօգտագործման պլանները*: Սակայն քիչ կարեւորություն են հաղորդում *արգելավայրերի կառավարման միջազգային փորձին*:

ԶԻ/ՀԿ խմբի ներկայացուցիչները մեծ կարեւորություն են վերագրում *քարտեզներին* եւ *հողօգտագործման պլաններին*: Դրանց հաջորդում են *բնապահպանական սահմանափակումները* եւ *տարածքի ուսումնասիրությունների արդյունքները*: *Արգելավայրերի կառավարման եւ օգտագործման* մասին ինֆորմացիան նույնպես կարեւոր է այս խմբի հարցվողների համար: Արգելավայրերի վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկատվությունը ներառում է արգելավայրի եւ համայնքի համակեցության պլանները, օրինակ, հինգ տարվա կտրվածքով: *Իրավական դաշտ, օրենսդրություն* դրույթի առնչությամբ «Հայաստանի անտառներ» ՀԿ ներկայացուցիչը նշում է, որ օրենք կա, բայց ենթաօրենսդրական դաշտը ձեւավորված չէ: Միաժամանակ հարցվողը ավելացնում

Է, որ պետք է լինի հստակ գոտիավորում եւ նշաններ, քանի որ արգելավայրը, որպես կանոն, ենթադրում է նաեւ տնտեսական գործունեության թույլատրելիություն: Ըստ հարցվողի, ուղիները, որոնք վայրի ոչխարը օգտագործում է ջրին հասնելու համար, պետք է դուրս մնան նախատեսվող արգելավայրի տնտեսական գոտու սահմանից: Մեկ այլ ՅԿ ներկայացուցիչ անդրադառնում է ՅԿ-ում գործող եւ նախատեսվող արգելավայրերի մասին ձեռնարկի անհրաժեշտությանը:

Միջազգային դոնոր կազմակերպությունների համար հատկապես կարեւոր են՝ արգելավայրերին առնչվող *իրավական դաշտն ու օրենսդրությունը, բնապահպանական սահմանափակումները*, ինչպես նաեւ *արգելավայրերի կառավարումը եւ օգտագործումը: Իրավական դաշտը* առանձնանում է իր կարեւորությամբ, քանի որ համայնքային արգելավայրերի եւ Էկոլոգիական միջանցքների կարգավիճակը հստակ եւ կամ կանոնակարգված է: Նույն խմբի ներկայացուցիչների համար ավելի քիչ կարեւորություն ունի, սակայն *քարտեզների եւ հողօգտագործման պլանների* մասին ինֆորմացիան:

Այս խմբի հարցվողները նշում են, որ արգելավայրերի վերաբերյալ կա նաեւ հետեւյալ տեղեկատվության պակասը. տարածքների նկարագիրը, ազգային անվտանգության կառույցների հետ համագործակցության հնարավորությունները: *Տարածքների նկարագիրը* կարեւոր է, քանի որ դաշտային աշխատանքներից է կախված քարտեզագրումը, սահմանազատումը, համայնքների հետ համագործակցությունը: Ինչպես մարզերում, այնպես նաեւ Երեւանում հարցման արդյունքները ցույց են տալիս, որ անհրաժեշտ է հնարավորինս տեղայնացնել արգելավայրերի միջազգային փորձը:

Հարցման մասնակիցներին հետաքրքրում են նաեւ՝ Էկոթրթուղիների քարտեզները, ագրոտուրիզմի զարգացման հնարավորությունները, տարածքի կենսաբազմազանությունը (մասնավորապես միջազգային եւ ՅԿ Կարմիր գրքի տեսակները), բնօգտագործման սխեմաները (օրինակ՝ ինչպես քաղել, արմատով, թե ոչ):

Քարտեզների, հողօգտագործման պլանների առումով մեկ հարցվող նշում է, որ նախընտրելի է տեսնել *ՅԿ Կարմիր գրքի տեսակները, կլիմայի փոփոխության միտումները եւ հրդեհավտանգ տարածքները ներկայացնող քարտեզներ:*

Պետական կառույցների ներկայացուցիչները հատկապես կարեւորում են *քարտեզներն ու հողօգտագործման պլանները:* Այս կարգի ինֆորմացիային իրենց կարեւորությամբ զիջում են *արգելավայրերի կառավարումը եւ օգտագործումը*, ինչպես նաեւ *տարածքի ուսումնասիրությունների արդյունքները:* Հարցվողները շատ են կարեւորում նաեւ *տարածքի բնապահպանական արժեքի* վերաբերյալ տեղեկատվությունը: Նրանց հետաքրքրում են արգելավայրերի իրատեսական սահմանները, կարգավիճակը, կառավարման լիազոր մարմինները եւ այլն:

2.1.3 Տեղեկատվության եւ հաղորդակցման գանկայի ձեւերը

Որպես տեղեկատվության ձեռքբերման եւ հաղորդակցության միջոց՝ հարցվողները առավել կարեւորում են *հանդիպումները* (ի համեմատ գրականության եւ ինտերնետ/Էլեկտրոնային փոստի):

ԸՅԻ/ՅԿ ներկայացուցիչները ամենից շատ կարեւորում են ինտերնետը/Էլեկտրոնային փոստը: ԸՅԻ/ՅԿ խմբի հարցվողները նշում են, որ տեղեկատվությունը պետք է մատչելի լինի բոլորի համար (համացանցի, թերթերի եւ հաղորդակցության այլ ձեւերի միջոցով): Նրանք կարեւորում են նաեւ արգելավայրին հարող համայնքներում եւ երթուղիների վրա համապատասխան ցուցանակների տեղադրումը: Գործող եւ նախատեսվող արգելավայրերի մասին ինֆորմացիան ՅԿ-ները առաջարկում են ներկայացնել *ուղեցույցերի* միջոցով: Մինչդեռ տարածքի ուսումնասիրության

արդյունքները հասանելի կարող են լինել *վեբ կայքերի եւ հատուկ հրատարակումների* եղանակով: Կան նաեւ հարցվողներ, ըստ ում, կարելի է մշակել *նախատեսվող արգելավայրերի վեբ կայքեր*: Չամաձայն խմբի այլ ներկայացուցիչների, իրազեկության բարձրացման միջոցների թվին են դասվում՝ *քարտեզները, տեղեկատվական բուկլետները, գրքերը, թերթերը, ռադիոն, հեռուստատեսությունը, սոցիալական կայքերը, տեղական մակարդակում կազմակերպվող բանավեճերը եւ տեղեկատվական կենտրոնները*: 34 ոլորտի մեկ ներկայացուցիչ նշում է, որ հանդիպումները կարելու են, սակայն՝ կապված ծախսերի կամ այլ ռեսուրսների հետ:

Միջազգային դոնոր կազմակերպությունները ամենից ավելի կարելու են *հանդիպումները* եւ քիչ՝ ինտերնետը: Զարգվողները նշում են, որ *ինտերնետը եւ էլեկտրոնային փոստը* օգտակար կարող են լինել զուտ հաղորդակցության առումով:

Այս խմբի շահառուները բարձր են գնահատում նաեւ *ֆորումներն ու պրեզենտացիաները*: Կան հարցվողներ, ըստ ում, հանդիպումների միջոցով ձեւավորվող ինֆորմացիայի հոսքը մեծ է եւ ժամանակ է խնայում: Նրանք կարծում են նաեւ, որ *հանդիպում-ժողովները* ամենաարդյունավետն են, սակայն պետք է կազմակերպվեն քայլ առ քայլ՝ հաշվի առնելով արձագանքները եւ ներառելով դրանք արձանագրություններում եւ հաշվետվություններում: Որոշ հարցվողներ չեն հավատում *ինտերնետի* արդյունավետությանը, քանի որ Չայաստանում ինտերնետից օգտվում է բնակչության մոտ 6.2%-ը⁴: Կարելուվում է նաեւ *գրականությունը* պայմանով, որ այն ներկայացվի եռալեզու տարբերակով եւ տրամադրվի համապատասխան շահագրգիռ կողմերին:

Պետական կառույցների ներկայացուցիչները կարելու են համարում տեղեկատվության եւ հաղորդակցման բոլոր ձեւերը՝ առաջնայնություն վերագրելով, սակայն, հանդիպումներին:

2.2 ԸԱՅՎՈՒՄՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՓԼԱՅԱՏՈՒՄ

2.2.1 Շահառուների վերաբերմունքը արգելավայրերի ստեղծմանը եւ ընդլայնմանը

Զարգման մասնակից շահառուների գերակշիռ հատվածը դրական կարծիք է հայտնել «Գևիչիկ» եւ «Խուստուփ» արգելավայրերի ստեղծման, ինչպես նաեւ «Չանգեզուր» արգելավայրի ընդլայնման ծրագրի վերաբերյալ:

ԸՅԻ/34 ոլորտի հարցվողների շրջանում կա կարծիք, որ վերաբերմունքը դրական է՝ պայմանով, որ ԲՀՊՏ համակարգի զարգացումը իրապես ծառայի սահմանված նպատակներին: 34 ոլորտի ներկայացուցիչները հայտնում են այն մտահոգությունը, որ ԶՀ-ում գործող արգելավայրի պահպանությանն արժանի ուշադրություն չի դարձվում, եւ աստիճանաբար բոլոր տարածքները սեփականաշնորհվում են կամ անօրինական տնօրինվում: Այս առումով, նրանք մեծ նշանակություն են վերագրում հարակից գյուղական համայնքների բնակչության ուսուցանմանը (հարուստ բնաշխարհի, անհրաժեշտ խնամքի եւ ուշադրության, բուսականության, բուսակենդանական աշխարհի պահպանության մասով):

Զարգվողները բացատրում են իրենց դրական վերաբերմունքը նրանով, որ արգելավայրերը նպաստում են կենսաբազմազանության պահպանությանը, անտառային տեսակային կազմի արդի վիճակի բարելավմանը, մարդկանց էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանը: Արգելավայրերի ստեղծումն ու ընդլայնումը, ըստ հարցվողների, արդի հրամայականն է բնական

⁴ <http://www.armtech.am>

ռեսուրսների գերշահագործումը նվազեցնելու եւ համայնքների զարգացումը ապահովելու նպատակով: Այսպիսով, նրանք առաջարկում են, որ կառավարման պլանի մեջ ընդգրկվեն կայուն բնօգտագործման մասին որոշակի դրույթներ:

Միջազգային դոնոր կազմակերպությունների շրջանում կա կարծիք, որ արգելավայրերը ստեղծվում են, սակայն հետեւողականություն դրանց պահպանության կամ կառավարման հարցերում չի նկատվում: Այս ոլորտում հնչեցրած մտահոգություններից մեկն այն է, որ արգելավայրերը կարող են հայտնվել խոցելի իրավիճակում, եթե, օրինակ, Գնիշիկի տարածքում նկատվեն ընդերքօգտագործման հեռանկարներ: Այնուամենայնիվ, նրանց համոզմամբ, պահպանության կարգավիճակ չունեցող տարածքները ավելի վտանգված են:

Այս կառույցների դրական վերաբերմունքը պայմանավորված է նրանով, որ արգելավայրերը գտնվում կամ նախատեսվում են կարելորագույն միջանցքների սահմաններում: Միջանցքները շատ կարելի են հատկապես խոշոր կաթնասունների գոյատեման համար: Նախկինում հարավային Չայաստանում կային միայն երկու գործող, սակայն տարանջատված արգելոցներ, այն է՝ «Խոսրով» եւ «Շիկահող», բայց 2009-ին ստեղծվեցին «Չանգեգուր» արգելավայրը եւ «Արեւիկ» ազգային պարկը՝ ընդգրկելով մոտավորապես 500 կմ² տարածք: Միակ բաց գոտին, ըստ հարցվողի, նախատեսվող «Խուստուփ» արգելավայրի տարածքն է, որի ստեղծման պարագայում կապահովվի Սյունիքի ԲՅՊՏ-ների կապակցվածությունը:

Շահառուներից մեկը կարծում է, որ թանգարանի բացումը արգելավայրի տարածքում կարող է արգելավայրի նշանակությունը հասարակության լայն զարգացման համար ավելի ըմբռնելի դարձնել եւ ապահովել համայնքի լիարժեք մասնակցությունը: Հարցվողը նշում է, որ խնդիր պահպանության գործում մասնակցության մոտիվացիա ստեղծելն է:

Այս խմբի հարցվողները համոզված են նաեւ, որ արգելավայրի ստեղծումն ու ընդլայնումը կարող են հիմք հանդիսանալ բնական ռեսուրսների կայուն կառավարման, տնօրինման, օգտագործման ու պահպանման համար:

Պետական կառույցների ներկայացուցիչները նույնպես դրական են վերաբերվում արգելավայրերի ստեղծման/ընդլայնման ծրագրին: Այնուամենայնիվ ՅՅ ԲՆ Կենսաբազմազանության քաղաքականության բաժնի ներկայացուցիչը ավելի մեծ տեղ է տալիս արգելավայրի կառավարման բարեփոխմանը՝ փաստելով, որ առկա արգելավայրերից միայն վեցն են գործում:

2.2.2 Շահառուների վերաբերմունքը համայնքների վարչական տարածքներում արգելավայր ստեղծելու նախաձեռնությանը

Հարցվողների կեսից ավելին դրական է վերաբերվում համայնքի վարչական սահմաններում արգելավայր ստեղծելու կամ այդ տարածքների հաշվին արգելավայրը ընդլայնելու նախաձեռնությանը:

«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՅԿ ներկայացուցիչները նշում են, որ արգելավայրի ստեղծումը համայնքների վարչական տարածքներում արդարացված է Էկոհամակարգերի եւ դրանց բաղադրիչների պահպանության եւ բնական վերարտադրության ապահովման նկատառումներով: Հարցվողները հավելում են նաեւ, որ խոսքը չի գնում տվյալ տարածքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի մասին: «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՅՅ օրենքը պետական արգելավայրերի համար սահմանում է պահպանության որոշակի ռեժիմ, որը պայմանավորված չէ արգելավայրի՝ համայնքի վարչական

կազմում գտնվելու հանգամանքով: Միաժամանակ, հաշվի առնելով գործող օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վերապահված որոշակի լիազորությունները, արգելավայրի կառավարմանն աջակցելու բնագավառում՝ համայնքի ղեկավարների մոտ համապատասխան գիտելիքների, ինչպես նաեւ նյութատեխնիկական ապահովվածության պարագայում, պետական արգելավայրի առկայությունը համայնքի վարչական սահմաններում կարող է արդյունավետ լինել կառավարման, ինչպես նաեւ վերահսկողության իրականացման տեսանկյունից:

ՀԿ խմբում կա կարծիք, որ արգելավայր ստեղծելիս հարկավոր է առաջին հերթին առաջնորդվել արժեքավոր բուսական եւ կենդանական աշխարհի զբաղեցրած արեալով եւ ոչ թե այդտեղ տեղակայված գյուղական համայնքներով: Միաժամանակ շատ կարեւոր է համայնքի ղեկավար մարմնի եւ բնակչության ինֆորմացված լինելը եւ արգելավայրի տարածքի պահպանության եւ մաքրության հարցերում ներգրավվածության ապահովումը: Այլ հարցվողներ նշում են, որ հարակից համայնքների պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության համար ավելի կբարձրանա: Որոշ ՀԿ-ներ կարծում են, որ անհրաժեշտ է նժարի վրա դնել գյուղատնտեսության եւ բնապահպանության օգուտներն ու վնասները եւ հարգել գյուղացու բնօգտագործման իրավունքը:

Ըստ *միջազգային դոնոր կազմակերպությունների*, համայնքը պետք է կրթվի եւ ստանա հատուկ գիտելիքներ արգելավայրի նշանակության մասին: Ուսուցումների արդյունքում հարցվողները ակնկալում են, որ տեղական բնակչության համար արգելավայրերի բնապահպանական նշանակությունը այլեւս կդառնա առաջնային: Այս կառույցները հնարավոր են համարում համայնքի կողմից արգելավայրերի վերահսկողությունը եւ կառավարումը: Նրանք բերում են գերամանական փորձի օրինակը, երբ պետությունը գյուղական համայնքների բնակիչներին կամ ֆերմերներին պայմանական աշխատավարձ է վճարում արգելավայրերի վերահսկողությունը իրականացնելու համար: Որոշ միջազգային դոնոր կազմակերպություններ արգելավայրի ստեղծումը համայնքների վարչական սահմաններում ընկալում են որպես բնապահպանական սահմանափակումներ եւ դրանցից բխող հնարավոր կոնֆլիկտներ:

ՀՀ ԲՆ Կենսաբազմազանության քաղաքականության բաժնի ղեկավարը կարծում է, որ այդ հարցը նպատակահարմար է ուղղել համայնքների ներկայացուցիչներին:

2.2.3 Արգելավայրի հիմնական նշանակությունը համայնքների համար

Հարցվողների մեծ մասը կարծում է, որ արգելավայրի նշանակությունը համայնքի համար տնտեսական է: Ըստ որում, ՀԿ ներկայացուցիչները գերակայություն են տալիս **բնապահպանությանը**, միջազգային դոնոր կազմակերպությունները՝ **տնտեսական** զարգացմանը, իսկ պետական կառույցները գտնում են, որ արգելավայրի արգասիքները **բոլոր երեք** առումներով համահունչ են:

ՀԿ ոլորտի ներակայացուցիչները նշում են, որ արգելավայրի հիմնական նշանակությունը համայնքների համար **բնապահպանական** է: Հարցվողները կարծում են, որ գյուղական համայնքների բնակչության եւ հատկապես երիտասարդ սերնդի բնապահպանական իրազեկությունը կբարձրանա, իսկ հոգածությունը շրջակա միջավայրի նկատմամբ ավելի մեծ կլինի: Նրանք նշում են նաեւ, որ արգելավայրային ռեժիմը թույլ կտա ապահովել նշված տարածքներում կենսաբազմազանության պահպանությունը:

Տնտեսական արգասիքների տեսանկյունից, հարցվողները տեսնում են հետեւյալ զարգացումները. արգելավայրի տարածքում հնարավոր կլինի իրականացնել վայրի պտուղների, հատապտուղների, ուտելի բույսերի, դեղաբույսերի հավաք, ինչը կարող է լրացուցիչ եկամուտներ բերել համայնքի

բնակիչներին: Հարցվողները անդրադառնում են նաեւ արգելավայրի սոցիալական նշանակությանը, քանի որ պետական արգելավայրի ստեղծումը հարակից համայնքների բնակիչների համար կարող է մասամբ լուծել զբաղվածության խնդիրը (օրինակ՝ ուղեվարի ծառայությունը) եւ ապահովել ընդհանուր համայնքի ներգրավումը: Որոշ հարցվողներ չեն տարանջատում սոցիալական ու տնտեսականը: Նրանք նշում են, որ գյուղնշանակության հողերի 1/3-ը ներկայում չի մշակվում. այսպիսով գյուղատնտեսությունը իր տեղը զիջում է տուրիզմին: Տուրիզմը համարվում է տնտեսության գերակա ճյուղ, քանի որ ծառայում է որպես ենթակառուցվածքի զարգացման հիմք (հյուրատներ, սննդի օբյեկտներ, արահետներ եւ այլն): Արգելավայրի տնտեսական նշանակությունը, ըստ հարցվողների, կայանում է նրանում, որ այն կարող է նախադրյալներ ստեղծել տարածաշրջանում Էկոլոգիական տուրիզմի, Էկոտուրիզմի եւ ագրոտուրիզմի զարգացման համար:

Ինչպես արդեն նշվել է, *միջազգային դոկոր կազմակերպությունները* բարձր են գնահատում արգելավայրի տնտեսական նշանակությունը: Այս համատեքստում նույնպես, հարցվողները դիտարկում են տնտեսական զարգացումը իբրեւ տուրիզմի զարգացում: Շահառուներից մեկը նշում է, որ բնապահպանությունը արգելավայրի ստեղծման պատճառն է, որից կարող են բխել սոցիալ-տնտեսական զարգացման նպատակային ծրագրեր:

ՀՀ ԲՆ Կենսառեսուրսների կառավարման գործակալության ներկայացուցիչը նշում է, որ արգելավայրի նշանակությունը համայնքի համար կարող է լինել բնապահպանական, ինչը սակայն կարող է հանգեցնել որոշակի սահմանափակումների եւ խոչընդոտել տնտեսական գործունեությանը: Այդ իսկ պատճառով հարցվողը առաջարկում է, որ երեք լուծումները կառուցվեն եւ կառավարվեն ճիշտ սխեմայով, որպեսզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման արդյունքում կենսառեսուրսների օգտագործումը նվազի (եթե իհարկե հաշվի են առնվում նաեւ համայնքի կարիքները):

ՀՀ ԲՆ Կենսաբազմազանության քաղաքականության բաժնի ղեկավարը նշում է, որ արգելավայրերի բնապահպանական, սոցիալական եւ տնտեսական նշանակությունը արտացոլված է Բնության պահպանության միջազգային միության կողմից սահմանված դրույթներում: Այսպիսով, արգելավայրի ստեղծման ընթացքում հաշվի են առնվում տարածքի գեղագիտական նշանակությունը (յուրօրինակ լանդշաֆտները, տաք եւ հանքային ջրերի աղբյուրները, բնական եւ պատմամշակութային ժառանգության օբյեկտները), ռեկրեացիոն հնարավորությունները, գիտության եւ/կամ կրթության համար մեծ կարեւորությունը, արգելավայրերի համակարգում չընդգրկված կամ մասամբ ընդգրկված Էկոհամակարգերի եւ տեսակների ներկայացուցչության ապահովման անհրաժեշտությունը: Հարցվողը հավելում է, որ եվրոպական երկրներում դա իրագործվում է համապատասխան ֆինանսական, տեխնիկական եւ մարդկային ռեսուրսների ներգրավման, ինչպես նաեւ Էկոլոգիական գիտակցության բարձր մակարդակի շնորհիվ:

2.3 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ

2.3.1 Պետական կառույցներ

ՀՀ ԲՆ Կենսառեսուրսների կառավարման գործակալության ներկայացուցիչը նշում է, որ կառույցը իր ողջ ներուժով հանդիսանում է լիազոր մարմին, որը իրավասու է նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարությանը եւ անմիջապես իրականացնել արգելավայրերի կառավարումը: Միեւնույն ժամանակ ՀՀ ԲՆ Կենսաբազմազանության քաղաքականության բաժնի ներկայացուցիչը անդրադառնում է փորձի ներդրման հնարավորությանը եւ տեսնում է հնարավոր

համագործակցություն օրենսդրական դաշտի եւ ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխման գործընթացներում:

2.3.2 Միջազգային դոնոր կազմակերպություններ/ծրագրեր

Միջազգային դոնոր կազմակերպությունների հիմնական կարողությունը, ինչպես եւ ՅԿ-ների պարագայում, խորհրդատվությունն է (օրինակ՝ արտոնների ճիշտ կառավարման վերաբերյալ): Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD) առաջարկում է համագործակցություն գյուղական ենթակառուցվածքի բարեկարգման, այգիների հիմնման եւ համապատասխան այլ գրանտային նախագծերում: «Յեյֆեր փրոջեքթ ինթերնեյշնլ» կազմակերպությունն ունի մեծ փորձ գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում եւ պատրաստակամ է համագործակցել տվյալ ծրագրի համայնքային զարգացման բաղադրիչով նախանշված գործողությունների շրջանակներում:

Այլ զարգացման գործակալություններ առաջարկում են մասնակցության հետեւյալ ձեւերը. արգելավայրի կենսաբազմազանության վերաբերյալ ինֆորմացիայի հավաքագրում եւ վերլուծություն, թրեյնինգների (օրինակ՝ կենսաբազմազանության օբյեկտների ճանաչման թեմայով) կազմակերպում արգելավայրի աշխատակազմի համար, իրազեկում, նյութերի պատրաստում եւ իրավական դաշտի ձեւավորում: Կազմակերպությունները առաջարկում են մասնակցություն նաեւ անտառատեղծման եւ անատմվերականգնման աշխատանքներում, այդ թվում՝ իրավական շահերի պաշտպանության ծրագրեր, Էկոկրթություն, հանդիպումների եւ ուսուցումների կազմակերպում, կարողությունների զարգացում, իրազեկության բարձրացում, հետազոտություններ եւ այլն:

Կան նաեւ կազմակերպություններ, որոնց գործունեությունը շարունակական չէ՝ կապված այս կամ այն ծրագրի ավարտի հետ, սակայն նման կազմակերպությունները ունեն, օրինակ, բնապահպանական առումով անվնաս գյուղատնտեսության մեթոդական ձեռնարկ⁵ կամ համապատասխան թրեյնինգների կազմակերպման փորձ ունեցող մասնագետներ, ովքեր կարող են մասնակցություն ունենալ տվյալ ծրագրում:

Միջազգային դոնոր կազմակերպությունները ակնկալում են մասնակցություն նաեւ արգելավայրերի ստեղծման, հզորացման գործընթացներում՝ ապահովելով աջակցություն անձնակազմի վերապատրաստման հարցում եւ աջակցություն կառավարման եւ բիզնես պլանների իրականացման գործում: Նրանք պատրաստակամ են օժանդակել համայնքներին՝ տրամադրելով սարքավորումներ, հեռադիտակներ, համազգեստ եւ այլ համապատասխան պարագաներ:

2.3.3 Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ

«Չայկական բարձրավանդակի կենսաբազմազանության պահպանման հիմնադրամ» ՅԿ ներկայացուցիչը նշում է, որ կազմակերպությունն ունի համայնքային աջակցության ծրագրեր (անասնապահության զարգացում, մեղվապահություն, պտղատու ծառերի այգիների հիմնադրում, մեքենատրակտորային կայանների ստեղծում եւ ագրոտեխնիկայի տրամադրում, հյուրատների ստեղծում համայնքներում՝ Շատին, Տաթեւ, Գևիշիկ, Շվանիձոր, հնարավոր է նաեւ Արենի կամ Ագարակածոր) իրականացնելու փորձ:

⁵ «Բարձրարժեք գյուղատնտեսությունը բնապահպանական մոտեցումներով» (ACDI/VOCA)

Իր հերթին, «Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ն պատրաստ է ցուցաբերել իրավական աջակցություն արգելավայրերի կանոնադրությունների եւ կառավարման պլանների մշակման, ինչպես նաեւ արգելավայրերի ստեղծման գործընթացում հարակից համայնքների բնակչության մասնակցությունը խթանելու հարցում: Ի հավելումս վերոնշյալի, կազմակերպությունը ակտիվ մասնակցություն է ունեցել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենսդրության մշակմանը, ունի որակյալ իրավաբաններ, ովքեր զբաղվում են հիշյալ խնդիրներով եւ պատրաստ են աջակցել ծրագրի իրականացմանը:

«Շեն» ԲՀԿ-ն արդեն 4 տարի համագործակցում է ՀՀ-ում գործող պետական եւ ոչ պետական այն կազմակերպությունների հետ, որոնք կարելի էր են բնապահպանական խնդիրները եւ օրգանական գյուղատնտեսության զարգացման հեռանկարներ են տեսնում: «Շեն» ԲՀԿ-ի կողմից անվճար կերպով տրամադրվել են 17,000 տարբեր ծառատեսակների տնկիներ անտառի վերատնկման եւ գյուղական համայնքների կանաչապատման համար: Տվյալ ծրագրի շրջանակներում «Շեն» ԲՀԿ խորհրդատվական խումբը կարող է արգելավայրերին հարակից համայնքներում հատուկ սեմինարներ անցկացնել օրգանական գյուղատնտեսության, վայրի հավաքի կազմակերպման վերաբերյալ:

«Կանաչ արահետ» ՀԿ-ն մեծ փորձ ունի վայրի ուտելի բույսերի մշակության աշխատանքների ոլորտում եւ պատրաստ է հրատարակել գրքույկներ դրանց մշակության վերաբերյալ, ինչպես նաեւ օգնել վայրի ուտելի բույսերի արտադրության ինտեգրացված կառավարման գործում՝ ամբողջացնելով հողից շուկա շղթան: Կազմակերպությունը նաեւ իրականացրել է ծրագրեր՝ ուղղված բնական կերհանդակների բարելավմանը՝ ի հավելումս ֆերմերային խմբերի ստեղծման եւ կայունացման աշխատանքների, ինչպես նաեւ գյուղատնտեսության եւ բնապահպանության ոլորտում իրականացրած կրթական, հետազոտական եւ ներդրումային ծրագրերի:

Այլ ԲՀԿ/ՀԿ մասնակցության եւ համագործակցության համապատասխան կարողություններն են՝ մասնագիտական խորհրդատվությունը, մասնակցային ուսուցման մեծ փորձը (տեղական բնակչություն, ՏԻՄ-եր, շահագրգիռ այլ կազմակերպություններ), հետազոտական ծրագրերի, ուսումնասիրությունների մեծ փորձը, ուսուցողական նյութերի եւ համապատասխան ուղեցույցերի մշակման հմտությունները եւ այլն:

3 ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ

3.1 ԳԻՄՆԱԿԱՆ ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄ

3.1.1 Պետական կառույցներ

Պետական կառույցների ներկայացուցիչները ակնկալում են համագործակցություն ծրագրի սահուն ընթացքը ապահովելու համար: Ապօրինի ծառահատումների առումով, հարցվողները նշում են, որ նշված արգելավայրերը անտառածածկ չեն: Այդուհանդերձ առաջարկում են ներգրավել անտառապահներ եւ որսիսկիչներ որսագողությունը եւ անտառահատումները կանխելու նպատակով:

Բնապահպանական պետական կառույցները կարելուք է նաեւ կենսաբազմազանության պահպանությունը հատկապես Գնիշիկում, քանի որ այստեղ կա շատ կարելու տեսակներ կորցնելու վտանգ: Զարգվողները կարծում են, որ ԲԶՊՏ ստեղծումն ու ընդլայնումը կարող են հանգեցնել բնապահպանական իրավախախտումների նվազմանը:

3.1.2 Միջազգային դոնոր կազմակերպություններ/ծրագրեր

Միջազգային դոնոր կազմակերպությունները ակնկալում են, որ ծրագրի իրականացման արդյունքում կհստակեցվեն սահմանները եւ գոտիները: Կստեղծվեն նաեւ համապատասխան կարողություններ (սարքավորումներ, աշխատակազմ) եւ համայնքների հետ համագործակցության բազա կամ մոդել: Կազմակերպությունները կարծում են, որ արգելավայրի պատշաճ գործունեության նախապայման է արգելավայրի աշխատակազմի հեղինակությունը:

Բնապահպանության առումով, շահառուների սպասելիքներն են՝ վտանգված տեսակների պահպանությունը եւ անվտանգ միգրացիայի ապահովումը, բուսատեսակների եւ վերացող կենդանական աշխարհի վերականգնումը, բուսակենդանական լանդշաֆտների պահպանությունը, տուրիզմի եւ տարածաշրջանի ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացումը:

Կան կազմակերպություններ, որոնք ավելի բարձր են գնահատում արգելավայրի կառավարման ճիշտ մեխանիզմների կիրառումը եւ համարում են կառավարման կայացումը լավագույն արդյունք (օրինակ, եթե արգելավայրի կառավարման պլանով նախանշվող արոտավայրերի երկարաժամկետ եւ ռացիոնալ օգտագործումը կիրառվի կենցաղում, իսկ պրոցեսը շարունակական բնույթ ունենա): Այս խմբում հարցվողների մեծ մասը կարծում է, որ արգելավայրի ստեղծման շնորհիվ կնվազեն բնապահպանական իրավախախտումները՝ օրինակ բերելով «Արեւիկ» ազգային պարկում առկա հսկողության հաջող փորձը, որի արդյունքում որսագողությունը նվազել է:

Որոշ պատասխաններում նկատելի է բնապահպանության եւ գյուղերի տնտեսական զարգացման շղթայական կապը. բնական ռեսուրսների ճիշտ տնօրինումն ու պահպանում, ճիշտ տնօրինման դեպքում Էկոտուրիզմի զարգացում եւ սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում: Զարգվողներից մեկը արգելավայրերի ստեղծման եւ պատշաճ գործունեության նախապայման է համարում ազատ ընտրությունները եւ իրավական պետությունը: Այլ սպասելիքների թվում են՝ տարածքների մաքրումը/բարեկարգումը, հուշարձանների պահպանությունը, եւ ԲՊՏ համայնքային կառավարումը տեղական բնակչության շրջանում սեփականատիրության զարգացումը խթանելու եւ շրջակա միջավայրի հանդեպ նրանց հոգածությունը մեծացնելու համար:

3.1.3 Բաղաքացիական հասարակության ինստիտուտներ

ՀԿ/ԸՀԻ խմբի հարցվողները կարծում են, որ արգելավայրերի ստեղծումը եւ ընդլայնումը օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանությամբ, ինչպես նաեւ ռեժիմի պատշաճ պահպանությունը եւ արդյունավետ վերահսկողությունը թույլ կտան ապահովել արգելավայրերի ստեղծման նպատակները: Ի լրումն նշվածի, նախադրյալներ կստեղծվեն տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

«Շեն» ԲՀԿ ներկայացուցիչները կարծում են, որ նոր արգելավայրերի ստեղծումը հնարավորություն կտա պահպանել ՀՀ-ում աճող արժեքավոր բուսատեսակները: Արգելավայրերի ստեղծումը կնպաստի նաեւ վայրի հավաքի կանոնակարգմանը, որը վերջին տարիներին ահռելի ծավալների է հասել: Վերոնշյալից բացի, ՀԿ ներկայացուցիչները կարծում են, որ արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման աշխատանքների արդյունքում կապահովվի Հայաստանի հազվագյուտ օբյեկտների պահպանությունը՝ որպես Էկոհամակարգ, տարածքի պահպանության ռեժիմի խստացումը, համայնքների զարգացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, տուրիզմի զարգացումը, ինչպես նաեւ Հայաստանի ԲՀՊՏ-ների միջազգային խրախուսումը եւ ճանաչումը:

3.2 ՀՆԱՐԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.2.1 Համայնքի շահերի տեսանկյունից

«Ներկա պահին արգելավայրերի ստեղծումը եւ ընդլայնումը կարող է խնդիրներ առաջացնել համայնքների շահերի տեսանկյունից» հարցին հաջորդող պատասխանները ներկայացված են ըստ խմբերի:

3.2.1.1 Պետական կառույցներ

Պետական կառույցների ներկայացուցիչները, ինչպիսիք են՝ ԲՆ Կենսաբազմազանության քաղաքականության բաժինը եւ Կենսառեսուրսների կառավարման գործակալությունը, համոզմունք են հայտնում, որ արգելավայրերի ստեղծումը բացասական ներգործություն կունենա գյուղական համայնքների գործունեության զարգացման վրա: Խնդիրների շարքին են դասվում խոտհարքերի եւ արոտավայրերի մակերեսների կրճատումը: Հարցվողները նշում են, որ նման փորձ արդեն իսկ եղել է՝ կապված «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտում համայնքային հողերը ընդգրկելու հետ: Նրանք հավելում են, սակայն, որ նման խնդիրները օրինաչափ են: Լուծումը, ըստ շահառուների այս խմբի, համայնքների հետ նախապատրաստական, այն է ծանուցողական աշխատանքներ տանելն է:

3.2.1.2 Միջազգային դոնոր կազմակերպություններ/ծրագրեր

Մի կողմից, միջազգային դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները համոզված են, որ խնդիրներ համայնքի շահերի տեսանկյունից կառաջանան՝ կախված այն հանգամանքից, թե որքանով արգելավայրերի ստեղծումը կամ ընդլայնումը կներառի մշակովի հողատարածքները: Մյուս կողմից, բնական ռեսուրսների վրա գործադրվող ճնշումը առհասարակ մեծ է, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է կիրառել համապատասխան բնապահպանական սահմանափակումներ՝ հաշվի առնելով, սակայն, գյուղացուն փոխհատուցելու սկզբունքը եւ այլընտրանքային եկամտի աղբյուրների ստեղծման կարելիությունը: Հարցվողները շեշտում են տեղական բնակչության

շահերի կարելորությունը (օրինակ, արգելավայր ստեղծելիս պետք է հաշվի առնել գյուղացու համար սովորական դարձած անտառ տանող ճանապարհը, իսկ փոփոխության անհրաժեշտության դեպքում համաձայնեցնել նման խնդրահարույց հարցերը համայնքի բնակիչների հետ):

3.2.1.3 *Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ*

Այս խմբի հարցվողները կարծում են, որ արգելավայրերի ստեղծումը եւ ընդլայնումը կարող է խնդիրներ առաջացնել համայնքի շահերի տեսանկյունից, եթե արգելավայրի համար նախատեսված տարածքը գյուղնշանակության է կամ ունի այլ տնտեսական կիրառություն: Նրանք հավելում են, որ առարկություններ կարող են հնչել անասնապահությամբ զբաղվող գյուղացիների կողմից եւ միաժամանակ նշում են, որ այստեղ կարող է օգնության ձեռք մեկնել համայնքապետը՝ առաջարկելով այլ արոտավայրեր:

Լշում: Ըստ որոշ հարցվողների՝ ցանքի ժամանակ արգելավայրերը կարող են խոչընդոտ հանդիսանալ գյուղատնտեսական աշխատանքների համար: Այս առումով, հարցվողները առաջարկում են, որ պահպանության ռեժիմը կարելի է թուլացնել եւ/կամ խստացնել: Այս դեպքում, օրինակ, սեպտեմբեր-հոկտեմբերին հանդակներում խոտհարքի աշխատանքները կարող են հետաձգվել, որպեսզի բնադրումը չխաթարվի: Մեկ այլ կարծիքի համաձայն, արգելավայրային ռեժիմի պարագայում նման խնդիրներ չեն առաջանա:

3.2.2 **Ծրագրի իրականացման առումով**

Ծրագրի հաջող իրականացման հնարավոր խոչընդոտները նույնպես ներկայացված են ըստ հարցվողների խմբերի:

3.2.2.1 *Պետական կառույցներ*

Պետական կառույցների ներկայացուցիչները կարծում են, որ արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման գործընթացները կարող են վտանգվել կոնֆլիկտների, որոշում կայացնողների պասիվության, քաղաքական կամքի բացակայության, փաստաթղթերի փաթեթի եւ փաստացի հողօգտագործման սխեմաների ոչ իրատեսական լինելու պատճառով:

Ըստ այս խմբի հարցվողների, այլ գործոններ եւս կարող են խոչընդոտել ծրագրի հաջող իրականացմանը: Օրինակ, սահմանների փոփոխությունը արվում է կառավարության որոշումով, եւ այդ գործընթացները երկար են տեւում: Դրան գումարվում է ՀՀ ՄՆ հնարավոր անհամաձայնության կամ *դեմ* կողմնորոշման հանգամանքը: Մեկ այլ դեպքում, մասնավոր կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի սեփականատերերը կարող են չհամաձայնել նշված հողերը ենթադրյալ արգելավայրի ենթակայությանը հանձնելու որոշման հետ:

3.2.2.2 *Միջազգային դոնոր կազմակերպություններ/ծրագրեր*

Ըստ միջազգային դոնոր կազմակերպությունների/ծրագրերի ներկայացուցիչների, արգելավայրի ստեղծման եւ հետագա կառավարման հիմնական խնդիրներն են՝ լեռնագործությունը, արգելավայրերին հողատարածք տրամադրելու անհամաձայնությունը եւ անկայուն իրավիճակը պետական սահմանի վրա, ռազմական բազաները եւ այլն:

Համաձայն որոշ պատասխանների խնդիրների շարքը կարող են համալրել թերի ֆինանսավորումը, սխալ կառավարման մեխանիզմները, կլիմայի փոփոխության հետեւանքները (ինչը կարող է նպաստել կոնկրետ կենդանատեսակների արեալների փոփոխությանը) եւ սոցիալական պայմանները (եթե սոցիալական վիճակը վատթարանա, մարդիկ ավելի ինտենսիվ կօգտագործեն բնական ռեսուրսները): Այս խմբի հարցվողների առաջարկն է՝ բարձրացնել բնակչության իրազեկության մակարդակը եւ ապահովել գործընթացների թափանցիկությունը:

3.2.2.3 *Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ*

Արգելավայրերի ստեղծման/ընդլայնման եւ հետագա կառավարման հաջող իրականացման երաշխիքները, ըստ ԶՅԻ խմբի շահառուների, հետեւյալն են՝ դոնորների կողմից ֆինանսավորման շարունակությունը, պետքույզեի հատկացումների կարելորկումը/ապահովումը, մարդկային ռեսուրսները, կենսառեսուրսների կայուն կառավարումը եւ այլընտրանքային եկամուտի աղբյուրների ստեղծումը (ագրոտուրիզմ, էկոտուրիզմ եւ այլն):

Կան կարծիքներ, որ համայնքների բնակիչները կարող են հիմնական խոչընդոտ հանդիսանալ ծրագրի հաջող իրականացման համար՝ իբրեւ շղթայական ազդեցություն կենսաբազմազանության եւ/կամ կենսառեսուրսների վրա: Օրինակ, գյուղաշխատանքների ժամանակ կրծողների դեմ պայքարում կարող են այլ կենդանիներ եւս վնասվել:

Վերոնշյալ կարծիքներին հաջորդում են հետեւյալ առաջարկները.

- Բացատրական, իրազեկման եւ կազմակերպչական աշխատանքներ տանել համայնքների հետ:
- Տեղական բնակչությանը տալ արգելավայրի տարածք ելումուտ անելու հնարավորություն:
- Վերլուծել այլ համայնքների նմանատիպ փորձը եւ հաշվի առնել փորձի փոխանակման կարելորկությունը:

3.2.3 **Ո՞վ պետք է իրականացնի վերահսկողությունն ու կառավարումը**

Համաձայն պետական կառույցների ներկայացուցիչների՝

1. Վերահսկողությունը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով՝ անկախ կառավարման մոդելի ընտրությունից:
2. Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքների վերահսկողությունն իրականացնում է լիազորված պետական մարմինը՝ «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Համաձայն միջազգային դոնոր կազմակերպությունների/ծրագրերի՝

1. Եթե արգելավայրը պետական է, ապա վերահսկողությունը պետք է ստանձնի ՀՀ բնապահպանության նախարարությունը, իսկ համայնքային արգելավայրի դեպքում՝ համայնքային խորհուրդը:
2. ԲՀՀ-ն ու հասարակական կազմակերպությունները:
3. Բնապահպանական ՀԿ-ները, տեղական իշխանությունները, բնապահպանական ակտիվիստները եւ համայնքի ներկայացուցիչները, այն է՝ եռակողմ:
4. Համաձայն որոշ կարծիքների, արգելավայրի համայնքային կառավարման պարագայում վերահսկողությունը պետք է ստանձնի ՀՀ բնապահպանության նախարարությունը:
5. ԲՊՏ-ն, որի աշխատանքը բարեփոխման կարիք ունի:

Համաձայն ԲՀԻ/ՀԿ ոլորտի ներկայացուցիչների՝

1. Արգելավայրերի գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության գործում պետք է ներգրավվեն արգելավայրերի հարակից համայնքների բնակիչները, տեղական ինքնակառավարման մարմինների եւ բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:
2. Արգելավայրի վերահսկողության գործում պետք է ներգրավվի հարակից համայնքների ղեկավարությունը: Եթե հարեւան համայնքների բնակիչները ուշադիր լինեն եւ ինսամբով վերաբերվեն պահպանվող տարածքին, վնասը զգալիորեն կնվազի:
3. Արգելավայրերի գործունեության վերահսկողության գործում պետք է ներգրավվեն պետական եւ մասնավոր կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ որոնք ակտիվ են այս ոլորտում: Պետք է սահմանվեն մեծ չափի տուգանքներ, եւ այդ տուգանված գումարների մի մասը ուղղվի արգելավայրերի պահպանման ու զարգացման համար:
4. Արգելավայրի վերահսկողության գործում պետք է ներգրավվի ՀՀ կառավարությունը ԲՀԻ հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ:
5. Համայնքները, համայնքապետերը, մարզպետարանը, կենսաբազմազանության եքսպերտները, ԲՊՏ-ն, պատմամշակութային հուշարձանների պահպանության տեսչությունը:

4 ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնվելով ուսումնասիրության արդյունքների վրա՝ կարելի է եզրակացնել, որ իրազեկության առումով Երեւանում գործող հաստատությունների ներկայացուցիչները մեծամասամբ տեղեկացված են ծրագրի իրականացման մասին: Ծրագրի մասին ավելի քիչ են տեղեկացված, սակայն, միջազգային դոնոր կազմակերպությունները:

Երեւանում իրականացված հարցումները ցույց են տալիս, որ շահառուները ամենից ավելի կարելուրում են *քարտեզները* եւ *հողօգտագործման պլանները*: Սակայն քիչ կարելուրություն են հաղորդում *արգելավայրերի կառավարման միջազգային փորձին*: Որպես տեղեկատվության ձեռքբերման եւ հաղորդակցության միջոց՝ հարցվողները առավել կարելուրում են *հանդիպումները* (ի համեմատ գրականության եւ ինտերնետ/Էլեկտրոնային փոստի):

Հարցման մասնակից շահառուների գերակշիռ հատվածը դրական կարծիք ունի «Գնիշիկ» եւ «Խուստուփ» արգելավայրերի ստեղծման, ինչպես նաեւ «Չանգեզուր» արգելավայրի ընդլայնման ծրագրի վերաբերյալ:

Հարցվողների կեսից ավելին դրական է մոտենում համայնքի վարչական սահմաններում արգելավայր ստեղծելու կամ այդ տարածքների հաշվին արգելավայրը ընդլայնելու նախաձեռնությանը:

Արգելավայրի նշանակությունը համայնքների համար տնտեսական է: Ըստ որում, ՀԿ ներկայացուցիչները գերակայություն են վերագրում բնապահպանությանը, միջազգային դոնոր կազմակերպությունները՝ տնտեսական զարգացմանը, իսկ պետկառույցները գտնում են, որ արգելավայրի արգասիքները բոլոր երեք առումներով հավասար կարելուրություն ունեն:

ԲՀՊՏ վերահսկողության պատասխանատու մարմինների առումով կարծիքները բազմազան են: Վերահսկողության դերը, համաձայն տարբեր հարցվողների, կարող են ստանձնել մի դեպքում միջազգային դոնոր կազմակերպությունները եւ ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության, իսկ մեկ այլ դեպքում՝ համայնքները, ՏԻՄ-երը, կենսաբազմազանության էքսպերտները, ԲՊՏ-ն, ՀՀ ՄԼ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունը:

Արգելավայրի ստեղծման եւ ընդլայնման ծրագրի համատեքստում շահառուների հիմնական սպասելիքներն են՝ կենսաբազմազանության պահպանությունը, բնապահպանական իրավախախտումների դեպքերի կրճատումը, ինչպես նաեւ տուրիզմի եւ տարածաշրջանի ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացումը:

Ըստ ռեսպոնդենտների, արգելավայրերի ստեղծումը եւ ընդլայնումը կարող է խնդիրներ առաջացնել համայնքի շահերի տեսանկյունից, եթե արգելավայրի համար նախատեսված տարածքը գյուղնշանակության է կամ ունի տնտեսական այլ նշանակություն:

Ծրագրի հաջող իրականացման հնարավոր խոչընդոտները տարբեր են. ԲՀՊՏ ստեղծման/ընդլայնման գործընթացները կարող են վտանգվել կոնֆլիկտների, որոշում կայացնողների պասիվության, քաղաքական կամքի բացակայության, ֆինանսների սղության եւ այլ պատճառներով:

Կա կարծիք, որ համայնքների բնակիչները կարող են հիմնական խոչընդոտ հանդիսանալ ծրագրի հաջող իրականացման համար՝ ազդելով կենսաբազմազանության եւ կենսառեսուրսների վրա (օրինակ՝ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ կրծողների դեմ պայքարում կարող են այլ կենդանիներ եւս վնասվել):

Վերոնշյալ կարծիքներին հաջորդում են հետեւյալ առաջարկները.

- Բացատրական, իրազեկման եւ կազմակերպչական աշխատանքներ տանել համայնքների հետ,
- Տեղական բնակչությանը տալ արգելավայրի տարածք մուտք գործելու հնարավորություն:
- Վերլուծել այլ համայնքների նմանատիպ փորձը եւ հաշվի առնել փորձի փոխանակման կարելիությունը:

Ըստ միջազգային դոնոր կազմակերպությունների/ծրագրերի, արգելավայրերի ստեղծման եւ հետագա կառավարման հիմնական խնդիրներն են՝ լեռնագործությունը, արգելավայրերին հողատարածք տրամադրելու անհամաձայնությունը եւ անկայուն իրավիճակը սահմանի վրա:

Խնդիրների շարքը կարող են համալրել թերի ֆինանսավորումը, սխալ կառավարման մեխանիզմները, կլիմայի փոփոխության հետեւանքները (ինչը կարող է նպաստել կոնկրետ կենդանատեսակների արեալների փոփոխությանը) եւ սոցիալական պայմանները (եթե սոցիալական վիճակը վատթարանա, մարդիկ ավելի ինտենսիվ կօգտագործեն բնական ռեսուրսները): Այս խմբի հարցվողների առաջարկն է՝ բարձրացնել բնակչության իրազեկության մակարդակը եւ գործընթացները կազմակերպել թափանցիկ:

Բացի զարգացման գործակալություններից, բնապահպանության, գյուղատնտեսության, աղքատության հաղթահարման, Էկոլոգիական կրթության եւ այլ ոլորտներում ծավալուն գործունեություն են իրականացնում նաեւ որոշ տեղական ԶԿ-ներ եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններ:

Այլընտրանքային եկամուտի աղբյուրների (տուրիզմ/Էկոտուրիզմ) ստեղծման տեսանկյունից տեղական բնակչությունը մասնակցություն ունենալու մեծ պատրաստակամություն ունի: Համաձայն շահառուների՝ ԲՀՊՏ ստեղծման եւ ընդլայնման խթանումը կարելի է մի քանի պատճառներով:

- *Գյուղական համայնքների տնտեսական զարգացում:* Տուրիզմը կարող է հավելյալ եկամուտներ բերել ԲՀՊՏ հարակից համայնքներին եւ ապահովել նրանց ապրուստը:
- *Բնապահպանական նախաձեռնություններում համայնքային մասնակցության երաշխիքների ստեղծում:*
- *Բնապահպանական իրազեկվածություն.* արգելավայրի տարածքում տուրիզմից բխող ուղղակի կամ անուղղակի օգուտները մարդկանց ավելի իրազեկ կդարձնեն արգելավայրի ռեսուրսների եւ դրանց նշանակության առումով: Էկոհամակարգերի պաշտպանության կարելիության գիտակցումը կհանգեցնի բնապահպանական աշխատանքներում բնակչության ավելի ակտիվ ներգրավման:

4.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շահառուների հիմնական առաջարկներն են.

Պետական կառույցներ

- Տեղայնացնել արգելավայրի միջազգային փորձը:
- Տրամադրել քարտեզներ համայնքներին, օրինակ, արածեցումը վերահսկելու համար:

Միջազգային դոնոր կազմակերպություններ/ծրագրեր

- Նախագծել տնտեսավարման այլընտրանքային եղանակներ, որոնք կապահովեն եկամտաբերություն (օրինակ, 20-25 կովի փոխարեն գյուղացիական տնտեսություններին առաջարկել 120-150 մեղվափեթակ):
- Ներառել կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցման կետը արգելավայրի կառավարման պլանում:
- Տրամադրել Էկոերթուղիների քարտեզները, բնօգտագործման սխեմաները (օրինակ՝ ինչպես քաղել, արմատով, թե ոչ), ագրոտուրիզմի զարգացման հնարավորությունների եւ տարածքի կենսաբազմազանության (մասնավորապես միջազգային եւ ՀՀ Կարմիր գրքի տեսակներ) մասին ինֆորմացիան համայնքների բնակիչներին:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ

- Կազմակերպել համայնքային արոտավայրերի եւ անասնապահության կառավարման մեթոդների ուսուցում՝ դիտարկելով գյուղատնտեսությամբ զբաղվողներին որպես թիրախային խումբ:
- Մինչեւ արգելավայրերի ստեղծումը եւ ստեղծման գործընթացին զուգահեռ առաջնահերթ իրականացնել համայնքային զարգացման ծրագրեր. այլընտրանքային եկամուտի աղբյուրների ստեղծում, համայնքային կենսառեսուրսների կայուն կառավարում, վարելահողերի, արոտավայրերի կայուն կառավարում եւ համայնքների ու արգելավայրերի կայուն համագործակցություն՝ որպես համայնքների՝ արգելավայրերի կայուն կառավարման գործունե գրավման միջոց:
- Անհրաժեշտ է տեղայնացնել նաեւ արգելավայրերի կառավարման միջազգային փորձը:
- Արգելավայրի կառավարման համակարգի ստեղծման համար վերլուծել նախկինում ներդրված համակարգը, միջազգային փորձը եւ մեկը մյուսի հետ համադրելով՝ ստեղծել ավելի արդիական կառավարման համակարգ:
- Տուրիզմը կազմակերպելու համար նախ եւ առաջ պետք է գիտական հիմք ունենալ (գույքագրում, մոնիտորինգ եւ այլն), քանի որ տուրիզմը ոչ միշտ է, որ դրական է լինում: Այսպիսով, կարելի է ընդհանուր գիտական հետազոտական աշխատանքների զարգացումը եւ համապատասխան գործընկերության հաստատումը մասնագիտացված կազմակերպությունների հետ:
- Փոխգործակցությունը պետք է լինի պաշտոնական բնույթի, արտացոլվի հաշվետվություններում:
- Կայուն տուրիզմը զարգացնելու համար անհրաժեշտ է ապահովել տեխնիկական հագեցվածություն, համապատասխան օպտիկա, աշխատավարձ եւ այլն:
- Գործընթացի արդյունավետության համար կազմակերպել արգելավայրերի գործունեության լուսաբանում զանգվածային լրատվության միջոցներով:
- Սահմանել մեծ չափի բնապահպանական տուգանքներ, եւ այդ տուգանված գումարների մի մասը ուղղել արգելավայրերի պահպանմանն ու զարգացմանը:

5 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



5.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հարցման մասնակից շահառուների ցանկ

N	Շահառուներ	Հասցե	Հեռախոս	Էլեկտրոնային փոստ	Հարցվող	Պաշտոն
1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ						
1	ՀՀ Բնապահպանության նախարարություն / Կենսառեեստրոսների կառավարման գործակալության ԲՀՊՏ կառավարման բաժին	Փավստոս Բյուզանդ 1/3, Երեւան 0010	91203346	agasaram@yahoo.com	Արամ Աղասյան	Բաժնի պետ
2	ՀՀ Բնապահպանության նախարարություն / Կենսաբազմազանության քաղաքականության բաժին	Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, Երեւան 0010	10521099	tanyadan@freenet.am	Տատյանա Դանիելյան	Բաժնի պետ
2. ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱԶՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ						
3	ACDI/VOCA (Գյուղատնտեսական կոոպերատիվների միջազգային զարգացում " կոոպերատիվների օտարերկրյա աջակցություն)	Հանրապետության 8, Երեւան 0010	544483 (ներքին`112) / 091468852	lhovhannisyan@acdivoca.am	Լիլիթ Հովհաննիսյան	Բնապահպանության եւ սոցիալական ոլորտի խորհրդատու
4	«Ազրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամ	Ազատության 1/21, տ. 40, Երեւան	10545711	gsardaryan@card.am	Գազիկ Սարգսյան	Տնօրեն
5	Հայաստանի Ամերիկյան համալսարան, Հակոբյան բնապահպանական կենտրոն	Բաղրամյան 40, Երեւան 0019	10512518	karen@aua.am	Կարեն Աղաբաբյան	Տնօրեն
6	NABU (Բնության եւ կենսաբազմազանության պահպանության միություն)	Խանջյան 13ա, Երեւան	10544571	mvoskan@mail.ru	Միխայիլ Վոսկանով	Ծրագրի համակարգող
7	ԲՀՀ-Հայաստան	Պռոշյան 11, Երեւան 0019	010524712 (ներքին`18)	ikhorozyan@wwfcaucasus.am	Իգոր Խորոզյան	Ծրագրի համակարգող
8	«Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» հայկական մասնաճյուղ	Մամիկոնյանց 48, սենյակ 604, Երեւան 0051	10208321, 091403224	anahit@hpi.am	Անահիտ Դազանջյան	Տնօրեն
9	IFAD (Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամ)	Դավիթ Անհաղթ 8/1, Երեւան	10202834	raedp@kvnet.am	Ալեքսանդր Զալանթարյան	Արտաքին կապերի մասնագետ

«Գևիշիկ», «Խուստուփ» եւ «Չանգեզուր» արգելավայրերի շահառուների վերլուծություն Եզրակացություններ եւ առաջարկություններ

10	Չամաշխարհային բանկ/ Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի իրականացման գործակալություն	Կոմիտաս 54/բ, Երեւան	10297302		Արմեն Վանյան	Փոխտնօրեն
11	«Կլիմայի փոփոխության հետեւանքների նկատմամբ Չայաստանի լեռնանտառային Էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացումը» ՄԱՉԾ/ԳԷՅ ծրագիր	Չանրապետության հրապարակ Կառավարական տուն 3, սենյակ 533, Երեւան 0010	583932 / 91559484	aram.ter-zakaryan@undp.org	Արամ Տեր- Չաքարյան	Ծրագրի առաջադրանքի ղեկավար
3. ՀԱՍԱՐԿԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅՑՈՒՆՆԵՐ (ԱՅԵՆ՝ ԿՈՊՊԵՐԱՏԻՎՆԵՐ, ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐ, ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ)						
12	«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ	Ալեք Մանուկյան 1, Երեւան 0025	10559602	elrc@ysu.am	Գոռ Մովսիսյան, Յեղիսե Հախվերդյան	Իրավաբաններ
13	«Հայկական բարձրավանդակի կենսաբազմազանության պահպանման հիմնադրամ» ՀԿ	Խաղաղ Դոնի 17, բն. 79, Երեւան	91737004	akarapet62@yahoo.com	Արթուր Կարապետյան	Տնօրեն
14	«Կանաչ արահետ» ՀԿ	Հերացի 16/29, Երեւան	10575779	nune@greenlane.am, office@greenlane.am	Նունե Սարուխանյան	Նախագահ
15	«Շեն» ՀԿ	Նալբանդյան 110, Երեւան 0001	10567031, 93218494	nvard@shen.am, nshahmuradyan@yahoo.com	Նվարդ Շահմուրադյան	Օրգանական գյուղատնտեսության ծրագրի ղեկավար
16	«Հայաստանի թռչունների պահպանման միություն» ՀԿ	Պ. Սեւակ 7, Երեւան 0014	93224498, 10208725	armbirds@yahoo.com, luba.balyan@enpi- fleg.org	Լյուբա Բալյան	Փոխտնօրեն
17	«Էյթիֆի» ԲՀ	Արշակունյաց 57/5, Երեւան 0026	10447401 (02)	armine@armeniatree.org	Արմինե Թոխմախյան	Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար
18	«Հայաստանի անտառներ» ՀԿ	Մոսկովյան 38, բն. 10, Երեւան 0002	91436809	info@armenianforests.am	Նազելի Վարդանյան	Նախագահ
19	«Գյուղատնտեսական կոոպերատիվների միություն» ԻԱՄ	Բաղրամյան 24դ, սենյակ 704, Երեւան 0019	93 020540, 10568183	sionuac@gmail.com	Սիմոն Արշակյան	Նախագահ

5.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2. Շահառուների կարիքների գնահատման հարցաթերթ

	<p>WWF Armenia 96 Sarmen Str. Yerevan 0019 Armenia</p>	<p>AM Partners Consulting Company ap.1, 62/1 K.Ulnetsi Str. Yerevan, Armenia</p>	
---	---	---	---

Հարգելի հարցվող,

Ձեզ ներկայացված հարցաթերթի լրացմամբ Դուք կօժանդակեք Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի իրականացմանը: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կենսաբազմազանության պահպանությանը եւ նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ապահովելով էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածություն:

Հարցաթերթիկը կազմվել է նախատեսվող «Գևիշիկ», «Խուստուփ» եւ գործող «Չանգեզուր» արգելավայրերի վերաբերյալ Ձեր մոտեցումները պարզաբանելու նպատակով: Ծրագրի իրականացման թիմը կարելուում է Ձեր կարծիքը՝ ակնկալելով հստակ պատասխաններ:

Ակնկալում ենք Ձեր աջակցությունը, կանխավ շնորհակալություն:

I. Անձնական տվյալներ

Անուն-ազգանուն	
Կազմակերպություն	
Պաշտոն	
Կրթություն	
Տարիքը	
Հասցեն	

1. Տեղյակ եք, արդյո՞ք «Գևիշիկ», «Խուստուփ» արգելավայրերի ստեղծման եւ «Չանգեզուր» արգելավայրի ընդլայնման ծրագրերի մասին: Եթե **այո**, ապա նշեք, թե ինչ գիտեք (ո՞վ է ստեղծում, ո՞ր ծրագրով, ինչ նպատակով եւ այլն) աղբյուրներից:

այո	ոչ

2. Տեղյակ եք, արդյո՞ք, «Գնիշիկ», «Խուստուփ» արգելավայրերի նախատեսվող, ինչպես նաեւ գործող «Չանգեզուր» արգելավայրի առկա տարածքների մասին: Եթե **այո**, ապա նշեք սահմանները:

այո	ոչ	մասամբ

3. Ինչպե՞ս եք վերաբերվում նշված արգելավայրերի ստեղծմանը եւ ընդլայնմանը: Ինչու՞:

դրական	չեզոք	բացասական

4. Ինչպիսի՞ տեղեկատվության պակաս է զգացվում արգելավայրերի վերաբերյալ:

Տեղեկատվություն	Կարեւորությունը		
	քիչ կարեւոր	կարեւոր	շատ կարեւոր
Քարտեզներ, հողօգտագործման պլաններ			
Իրավական դաշտ, օրենսդրություն			
Բնապահպանական սահմանափակումներ			
Արգելավայրերի կառավարում եւ օգտագործում			
Արգելավայրերի կառավարման միջազգային փորձ			
Տարածքի ուսումնասիրությունների արդյունքներ			
Այլ (նշեք)			
Այլ (նշեք)			

Այլ (նշեք)			
-------------	--	--	--

5. Նշեք տեղեկատվության ձեռքբերման եւ հաղորդակցության ցանկալի ձեւերը:

Տեղեկատվության աղբյուր	Կարելիությունը		
	քիչ կարելի	կարելի	շատ կարելի
Հանդիպումներ			
Գրականություն			
Ինտերնետ, Էլեկտրոնային փոստ			
Այլ (նշեք)			
Այլ (նշեք)			
Այլ (նշեք)			

6. Ինչպե՞ս եք ընդունում համայնքի վարչական սահմաններում գտնվող տարածքներում արգելավայր ստեղծելու գաղափարը:

Համաձայն եմ, որովհետեւ

Համաձայն չեմ, որովհետեւ

7. Ո՞րն է արգելավայրերի հիմնական նշանակությունը ՊՏ հարակից համայնքների համար

ա. սոցիալական, քանի որ _____

բ. տնտեսական, քանի որ _____

գ. բնապահպանական, քանի որ _____

8. Ներկա պահին համայնքները որքանով են մասնակցում արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման գործընթացներին:

այո	ոչ	չգիտեմ

9. Ներկա պահին արգելավայրերի ստեղծումը եւ ընդլայնումը կարող է, արդյո՞ք, խնդիրներ առաջացնել հարակից համայնքների շահերի տեսանկյունից:

այո	ոչ	չգիտեմ

10. Նշեք արգելավայրերի կառավարման խնդիրներում Ձեր կողմից հնարավոր մասնակցության/աջակցության ձեւերը, որոնք կնպաստեն դրանց արդյունավետ կառավարմանը:

11. Որո՞նք են արգելավայրի ստեղծման, ընդլայնման եւ հետագա կառավարման հիմնական խնդիրները, որոնք կարող են վտանգել այս ծրագրերը:

12. Ի՞նչ կարողություններ ունի Ձեր կազմակերպությունը/կառույցը արգելավայրերի կառավարմանը մասնակցելու/աջակցելու առումով: Մանրամասնել պատասխանը:

13. Ինչպիսի՞ կոնկրետ ակնկալիքներ ունեք արգելավայրերի ստեղծումից եւ ընդլայնումից:
Մանրամասնել պատասխանը.

14. Արդյո՞ք արգելավայրերի ստեղծումն ու ընդլայնումը կարող է լուծում տալ մասնավորապես անտառհատումներին եւ/կամ որսագողությանը: Ինչպե՞ս եք վերաբերվում այս խնդիրներին:
Մանրամասնել պատասխանը.

15. Ովքե՞ր պետք է ներգրավված լինեն արգելավայրերի գործունեության վերահսկողությանը:
Ինչու՞: *Մանրամասնել պատասխանը:*

16. Կոնկրետ ինչպե՞ս կարող է արգելավայրերի ստեղծումը եւ ընդլայնումը նպաստել հետեւյալ շահառուներից յուրաքանչյուրի գործունեության զարգացմանը:

ա. Համայնք _____

բ. Մարզային իշխանություն _____

գ. Մասնավոր բիզնես _____

դ. ՀԿ-ներ _____

ե. Պետական կառույցներ («Հայաստան ՊՈԱԿ», բնապահպանական տեսչություն, այլ)

զ. Միջազգային դոնոր կազմակերպություններ _____

է. Տուրիստական կառույցներ _____

ը. Այլ _____

17. Կոնկրետ ինչպե՞ս կարող է արգելավայրերի ստեղծումը խանգարել հետեւյալ շահառուներից յուրաքանչյուրի գործունեության զարգացմանը:

ա. Համայնք _____

բ. Մարզային իշխանություն _____

գ. Մասնավոր բիզնես _____

դ. ՀԿ-ներ _____

ե. Պետական կառույցներ («Հայաստան ՊՈԱԿ», բնապահպանական տեսչություն, այլ)

զ. Միջազգային դոնոր կազմակերպություններ

է. Տուրիստական կառույցներ _____

ը. Այլ _____

18. Ինչպիսի՞ թեմաներով կցանկանայիք ուսուցումներ ստանալ: Գնահատեք ըստ կարեւորության: 1-ից 5-ը, որտեղ 1-ը «անհրաժեշտ չէ», իսկ 5-ը՝ «խիստ անհրաժեշտ»:

Թեմա	Միավոր
Բույսերի պահպանություն	
Կենդանիների պահպանություն	
Հավատարմագրային կառավարում	
Բնապահպանական օրենսդրություն եւ կանոնակարգեր	
Արգելավայրերի կառավարման պլանավորում	

Համայնքային արոտավայրերի եւ խոտհարքերի կայուն կառավարում	
Ռեկրեացիայի, Էկոտուրիզմի	
Որսատնտեսության կազմակերպում	
Օտար լեզուների ուսուցում	
Համակարգչի ուսուցում	
Այլ՝	
Այլ՝	
Այլ՝	

19. Բաց առաջարկություններ եւ կարծիք
